

**ԺԷ.00.01 – ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ. ԿԻՆՈԱՐՎԵՍՏ,
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տեսություն

Թատերական արվեստի առանձնահատկությունը մյուս արվեստների համակարգում: Անձի կենդանի ներկայությունը որպես բեմական արվեստի առանձնահատուկ սկզբունք և թատերական համադրականություն (սինթեզ) ամբողջացյալ: Գործողությունը որպես բեմական ներկայության հոգեբանական արդարացում: Գործողության կենսական ճշմարտությունը և պայմանականությունը: Գործողության թատերայնությունը: Առաջադրվող և ենթադրվող հանգամանքները գործողության մեջ: Խաղային տարերք և խաղը որպես ձևային հիմք թատրոնում:

Թատերական արվեստի ինքնակեցությունը (ավտոնոմիա) գրականությունից դուրս: Գրական հիմք և բեմական հիմք: Խոսքային նյութ և խոսքից դուրս իրականություն: Բեմական գործողության հայտնագործումը որպես թատերական կոնտեքստի ստեղծում: Ռեժիսուրան որպես գործողության կազմակերպում և գործող անձանց փոխհարաբերությունների տեսանելի կարգավորում: Ռեժիսորը որպես ներկայացման հեղինակ: Գրական հիմքի և բեմական գործողության համախոս և հակասական վիճակները: Գրական նյութի օբյեկտիվ բովանդակությունը և բեմադրության սուբյեկտիվ տարրերը: Բեմադրության անկախ արժեքը գրական հիմքի անխախտության պայմաններում:

Կրկեսը որպես թատերական արվեստի տեսակ: Խաղային տարերքը կրկեսում և գործողության թատերայնությունը: Կրկեսը որպես շրջադրված կյանք համաձայն կենտրոնամետ և կենտրոնազանց գծերի: Զարմանալին, դրամատիկականը և անհեթեթը (աբսուրդ) կրկեսի գեղագիտության հիմքում:

Թատրոնը և գրականությունը: Դրամատուրգիան որպես գրական սեռ և բեմական արվեստի նյութ: Դրամատիկական գործողություն (ըստ Արիստոտելի և Հեգելի): Դրամայի բուն առանձնահատկությունը. ներկա պահ, առաջին դեմք և իրականացվող կամք: Պիեսը որպես թատերական համակարգի անդրադարձ (պրոեկցիա): Դրամատուրգիայի հարաբերությունը կյանքի և բեմի հետ: Դրամատուրգիական կերպարներն ըստ բեմական նախատիպերի (բեմական ամպլուաներ և կոնկրետ անձինք): Պիեսի բեմականության հարցը. բեմադրական շարադրանք և ընթերցվելիք շարադրանք: Դրամատուրգիական տեսակներ և ժանրեր: Դրամատուրգիական պոտենցիալը ոչ դրամատուրգիական երկերում:

Գրական էստրադան որպես մեկ դերասանի թատրոն: Չափածոյի և արձակի էստրադային ընթերցումը որպես թատերական արվեստի տեսակ: Ներքին տարածությունը և գործողության գաղափարը էստրադայում:

Թատրոնի ընդհանուր պատմություն

Դրամայի և թատրոնի ծագման տեսությունները. բուսապաշտական (“վեգետատիվ”) և արևապաշտական (“սոլյար”): Դրամայի ծագման առաջավորասիական և միջագետյան ակունքը և ծիսական նախնական սյուժեն՝ շղթայվածի առասպելը Հայաստանում: Դրամայի ծիսային արմատները Հին Հունաստանում. Էլևսինյան միստերիաներ և Դիոնիսիսի պաշտամունք նոխազյան զոհաբերությամբ:

Հին ատտիկյան ողբերգությունը. Էսքիլես, Սոֆոկլես, Եվրիպիդես: Հին ատտիկյան կատակերգությունը. Արիստոֆան: Թատերական հնագույն շենքերը Հունաստանում և բեմադրական համակարգը: Նոր ատտիկյան կատակերգությունը. Մենանդրոս: Արիստոտելի “Պոետիկան” որպես դրամայի դասական փորձի տեսական ընդհանրացում: Հելլենիզմը և թատրոնը: Հունական թատրոնի արտագաղթը և մարումը Արևելքում: Հունական թատրոնը Հայաստանում (Արմավիր, Տիգրանակերտ, Արտա-

շատ): Արտավազդ Բ և Եվրիպիդեսի “Բաքսուհիներն” Արտաշատում: Ուշ հելլենիզմը (1-ին դ. մ.թ.ա.) և թատերական ժանրերը: Միմոսը որպես թատերական ժանր և դրա տարածումն Ասորիքում:

Թատրոնը Հին Հռոմում. ժողովրդական կատակերգություն (ատելլանա) և տոներ: Հունական միմոսը Հռոմում և դրա տարածումը Մերձարևելքում: Հռոմեական թատերական ժանրերը. ֆաբուլա պալիատտա, տոգատտա, պրետեքստատա: Հռոմեական կոմեդիոգրաֆները. Պլավտուս, Տերենցիոս: Սյուժետային տիպաբանությունը հռոմեական կոմեդիայում: Դրամայի վերասերումը Հռոմում և Սենեկայի ողբերգությունները հունական թեմաներով: Հռոմեական միմոսը, կրկեսը և գլադիատորական խաղերը: Հռոմեական թատերաշենքերը և նրանց տարածումը մերձարևելյան երկրներում:

Վաղ միջնադարյան աշխարհիկ-հրապարակային թատրոնը. Հիստրիոններ, ժոնգլորներ: Եկեղեցի և թատրոն հարաբերությունը. Հակաթատրոնական ճառերը և նրանց բարոյա-փիլիսոփայական իմաստը: Քրիստոնեական պատարագը որպես անտիկ դրամայի մետամորֆոզ: Լիթուրգիական դրաման և արևմտաեվրոպական միստերիալ թատրոնը: Միրակլ, մորալիտե, միստերիա:

Ֆրանսիական ֆարսը և իալական դիմակների թատրոնը (կոմեդիա դելլ’արտե): Իտալական կոմեդիա էրուդիտեն. Լոդովիկո Արիոստո, Պիերրո Արետինո, Ջորդանո Բրունո, Մաքիավելի: Թատրոնական շենքերը Իտալիայում և բեմանկարչության սկզբնավորումը: Վերածնության դարաշրջանի թատերական ժանրերը. տրագեդիա, կոմեդիա, պաստուրելա: Օպերայի սկզբնավորումը և Մոտեվերդին: Գերմանական աշխարհիկ կատակերգությունը. Հանս Սաքս:

Անգլիական թատրոնը 15-16-րդ դարերում և Շեքսպիրի նախորդները. Թոմաս Հեյվուդ, Ռոբերտ Գրին, Բեն Ջոնսոն: Լոնդոնյան թատրոնները և դերասանները. Էդուարդ Ալեն, Ուիլյամ Քեմպ, Բըրբեջներ: Շեքսպիրի

ողբերգությունները. “Համլետ”, “Լիր արքա”, “Մակբեթ”, “Օթելլո”, “Հուլիոս Կեսար”: Շեքսպիրի կատակերգությունները. “Վենետիկի վաճառականը”, “Տասներկուերորդ գիշեր”: Շեքսպիրի դարաշրջանի թատրոնի բեմադրական համակարգը: Շեքսպիրի ժամանակակից Քրիստոֆեր Մառլոն և նրա “Դոկտոր Ֆաուստի ողբերգությունը”:

Վերածնության դարաշրջանի իսպանական թատրոնը և հիմնական հեղինակները. Կալդերոն, Տիրսո դե Մոլինա, Լոպե դե Վեգա: Իսպանական պանդոկային թատրոնը: Տիրսո դե Մոլինայի “Սևիլիայի անառակը”, Լոպե դե Վեգայի պիեսները. “Ոչխարի աղբյուր”, “Պարտիզպանի շունը”, “Սևիլիայի աստղը” և այլն: Իսպանական հոգևոր դրաման (աուտո): Իսպանական թատրոնի բեմադրակարգը:

17-րդ դարի ֆրանսիական թատրոնը: Կլասիցիստական ողբերգությունը (Կորնելյ, Ռասին) և կլասիցիզմի պոետիկան (Բուալո): Կլասիցիստական թատրոնի բեմական էթիկան և խաղաոճը: Կլասիցիստ դերասաններ. Անրի Լեկեն, Թերեզա Դյուպարկ, Մարիա Շանմելե: Կլասիցիստական կոմեդիան. Մոլիեր (“Տարտյուֆ”, “Ժլատը”, “Երևակայական հիվանդը”, “Սերը բժիշկ է” և այլն): Մոլիերի դարաշրջանի դերասանները և նրանց խաղային ավանդները (Միշել Բարոն, Պրեվիլ):

Առաջին ստացիոնար թատրոնների հիմնումը Ֆրանսիայում. Բուրգունդյան պանդոկ և “Կոմեդի ֆրանսեզ” (1680թ.): Ֆրանսիական բեմական ակադեմիզմի սկզբնավորումը:

Ֆրանսիական լուսավորական թատրոնը. Վոլտերի թատերագրությունը և Դիդրոյի “Դրամատիկական բանաստեղծության մասին” տրակտատը: Գերմանական լուսավորական թատրոնը. Գոտշեդ և Կարոլինա Նոյբեր: Լեսսինգի դրամաները (“Նաթան Իմաստուն”, “Էմիլիա Գալոտտի”) և “Համբուրգյան դրամատուրգիա” տրակտատը: Անգլիական լուսավորական թատրոնը. Դևիդ Գարիկ, Սառա Սիդդընս, Ջոն Բեմբլ: Անգլիական լուսավորական կոմեդիան. Կոնգրիվ, Շերիդան, Ֆիլդինգ: Ֆրանսիական

լուսավորական կոմեդիան. Բոմարշեի “Սևիլիայի սափրիչը” և “Ֆիգարոյի ամուսնությունը”: Իտալական լուսավորական կոմեդիան. Կարլո Գոցցի, Կարլո Գոլդոնի: Իտալական լուսավորական ողբերգությունը. Պիետրո Մետաստազիո, Վիտորիո Ալֆիերի:

Ռոմանտիզմը թատրոնում և դրամատուրգիայում: Գյոթեի դրամաները՝ “Էգմոնտ”, “Կլավիգո”: Շիլլերի դրամաները. “Ավազակներ”, “Խարդավանք և սեր”, “Օւլենսի կույսը”: Ֆրանսիական ռոմանտիկական թատրոնը և ռոմանտիզմը դերասանի արվեստում. Մարս, Տալմա, Ռաշել: Անգլիական ռոմանտիկա-կան թատրոնը և Էդմունդ Քինը որպես Շեքսպիրի ռոմանտիկական մեկնաբան: Գերմանական ռոմանտիկական թատրոնը (Շրյոդեր): Ռոմանտիզմի նոր շրջանը ֆրանսիական թատրոնում. Վիկտոր Հյուգոյի դրամաները (“Լուկրեցիա Բորջա”, “Մարիոն դը Լորմ”, “Անջելո”, “Ռյուի Բլազ” և այլն): “Կրոմվելի” առաջաբանը որպես ռոմանտիկական դրամայի մանիֆեստ: Ֆրանսիական ռոմանտիկական բեմական դպրոցի կազմավորումը. Պիեռ Բոկաժ, Մարի Դորվալ, Ֆրեդերիկ Լեմեթր, Էլզա Ռաշել: Ռոմանտիզմը իտալական թատրոնում և “կոլորիտային ռեալիզմի” վարպետները. Գուստավո Մոդենա, Ադելաիդա Ռիստորի, Թոմազո Սալվինի, Էռնեստո Ռուսի:

Ռուս թատրոնի սկզբնավորումը (Վոլկով, Դմիտրիևսկի): Ռուսական կլասիցիստական կոմեդիան. Դ. Ֆոնվիզին, Ա. Գրիբոյեդով: Մոսկվայի Փոքր թատրոնը: Ռուսական ռոմանտիկական դրաման. Ա. Պուշկին, Յու. Լերմոնտով: Ռոմանտիզմը դերասանական արվեստում. Յակովլև, Սեմյոնովա, Մոչալով: Ռուս դերասանական արվեստի պետերբուրգյան դպրոցը, Վ. Կարատիգին, Ա. Մարտինով, Վ. Սամոյլով, Ա. Ասենկովա, Յու. Լինսկայա և այլք: Ռուս ռեալիստական դրամատուրգիան. Ա. Օստրովսկի (“Անօժիտը”, “Ամպրոպ” և այլն), Ա. Սուխովո-Կոբլին (“Կրեչինսկու հարսանիքը”, “Գործը”): Ռուս դերասանական արվեստի մոսկովյան դպրոցի սկզբնավորողները. Մ. Շչեպկին, Պ. Սադովսկի, Գ.

Ֆեդոտովա, Մ. Երմոլովա: Ն. Գոգոլի “Ռևիզորը” և սուր խարակտերային գիծը ռուս դերասանական արվեստում: Արևմտասիրությունը և սլավոնասիրությունը ռուս բեմում: Վ. Բելինսկին թատերական քննադատ: Անցումը ռոմանտիզմից մելոդրամատիզմ 19-րդ դարակեսի արևմտա-եվրոպական բեմում: Դասական մելոդրաման. Ա. Դյումա, Ֆ. Պիա, Ժ. Բուշար, Թ. Բարրիեր, Վ. Դյուկանժ, Ա. դ’Աննրի, Ֆ. Դյումանուար և այլք: Փարիզի բուվարային թատրոնները: Է. Սկրիբի և Վ. Սարդուի դրամատուրգիան: Ֆրանցիսկ Սարսեն թատերական քննադատ (գրական արժեքի և բեմականության խնդիրը): Ռոմանտիզմի և դասականության գիծը դերասանական արվեստում. Սառա Բեռնար, Մունե Սյուլի: Փարիզի կոնսերվատորիան և բեմական ակադեմիզմը: Կոկլեն-ավագը և նրա տեսական սկզբունքները: Նեոռոմանտիզմը ֆրանսիական դրամատուրգիայում (Էդմոն Ռոստան՝ “Սիրանո դը Բերժըրակ”, “Ռոմանտիկներ”): Անգլիական թատրոնը 19-րդ դարի երկրորդ կեսին և շեքսպիրյան ավանդները. Հենրի Իրվինգ, Էլեն Թերի, Չարլզ Քին, Ուիլյամ Մեքրեդի: Բեռնարդ Շոուն դրամատուրգ և թատերական քննադատ: Ռեժիսուրային սկզբնավորումը որպես ինքնուրույն արվեստ (Թոմաս Գրեյն): Շեքսպիրյան ավանդները գերմանական բեմում. Էռնրստ Պոսարտ, Լյուդվիգ Բառնայ, Ալդբերգ Մատկովսկի, Յոզեֆ Կայնց, Սանդրո Մոիսսի: Ռեժիսուրայի ինքնուրույնացումը գերմանական թատրոնում. Օտտո Բրահմ, Լյուդվիգ Քրոնեգել, Մաքս Ռայնհարդտ: Մեյնինգենյան թատրոնը ռուս թատերական քննադատության և Ստանիսլավսկու գնահատմամբ: Նատուրալիզմը ֆրանսիական թատրոնում. Անդրե Անտուանի “Ազատ թատրոնը”: Վերիզմը իտալական թատրոնում. Էրմետե Նովելլի, Ջովաննի Գրասսո: Նատուրալիստ դերասան Էրմետե Յակկոնին: Իտալական հոգեբանական ռեալիզմի բարձրագույն դրսևորումը. Էլեոնորա Դուգե: Գաբրիել դ’ Անունցիոյի նորագույն դրամատուրգիան:

Հոգեբանական ռեալիզմը և սոցիալական դրաման. Գ. Հաուպտման, Բ. Բյոռնսոն, Հ. Իբսեն: Մելոդրաման և սալոնային դրաման դերասանական նախասիրությունների տեսակետից, և մրցորդային դերերը (Ա. Դյումա-որդի)՝ Քամելիազարդ կինը”, Պ. Զիակոմետտի՝ “Ոճրագործի ընտանիքը”): Խաղայցելու (գասարույր) միայնակ ողբերգակներ:

Սիմվոլիզմը դրամատուրգիայում և թատրոնում. Մորիս Մետերլինկ, Ստանիսլավ Պշիբըշևսկի: Իբսենի սիմվոլիզմը. “Կառուցանող Սոլենա”: Սիմվոլիզմը ռուս դրամատուրգիայում. Լ. Անդրեև՝ “Մարդու կյանքը”: Սիմվոլիզմը և պատմական թեմատիկան եվրոպական բեմում:

Ռուս թատրոնը 19-20-րդ դարերի սահմանագծում: Հետոստրովսկիական շրջանի դրամատուրգիան (Ա. Յուժին-Սումբատով, Ս. Նայդյոնով, Ն. Պոտեխին, Ի. Շպաժինսկի) և Մոսկվայի Կորչի թատրոնը: Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը և Ստանիսլավսկին: Գեղարվեստական թատրոնի վարպետները. Մոսկվին, Կաչալով, Տարխանով, Լեոնիդով, Կնիպպեր-Չեխովա, Յավորսկայա և այլք: Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնը: Յուրի Յուրև, Վերա Կոմիսարժևսկայա: Ա. Չեխովի դրամատուրգիան. “Բալենու այգին”, “Ճայը”, “Իվանով”, “Երեք քույր”: Մ. Գորկու դրամատուրգիան. “Հատակում”, “Քաղքենիներ”, “Արևի գավակները”, “Եգոր Բուլչշովը և ուրիշներ”:

Ստանիսլավսկու կիրառական հոգեբանության դասընթացը (“սիստեմ”) և Գեղարվեստական թատրոնի ստուդիաները: Առաջին ստուդիան և Վախթանգովը: Վախթանգովի ստուդիական բեմադրությունները (“Սուրբ Անտոնիոսի հրաշքը”, “Արքայադուստր Տուրանդոտ”): Վսեվոլոդ Մեյերխոլդը և՛ պայմանականությունից էքսցենտրիզմ: Վլադիմիր Մայակովսկին և թատրոնը: Գեորգի Յակոլովի բեմանկարչությունը և մեյերխոլդյան գիծը թատրոնում: Դասական ավանդության կրողները բեմում. Յու. Յուրև, Նիկոլայ Ռոսսով: Թաիրովի “Կամերային թատրոնը”:

Արևմտաեվրոպական նորագույն թատրոնը: Շառլ Դյուլլենը և “Ատելիե” թատրոնը Փարիզում: Դյուլլենի աշակերտները. Ժան Լուի Բարրո, Ժան Վիլար, Մարիա Կազարես, Մադլեն Ռենո, Մադլեն Ռոբինսոն: Ժակ Կոպոյի “Հին աղավնատուն” թատրոնը: Ֆիրմեն Ժեմիե, Լուի Ժուվե, Ժորժ Փիթոն:

Բերտոլտ Բրեխտը և “Բեռլիներ անսամբլը”: Բրեխտի դրամատուրգիան. “Գալիլեյի կյանքը”, “Կուրաժ մայրիկն ու իր որդիները”, “Արթուրո Ռիփի կարիե-րան”, “Կովկասյան կարճ շրջան” և այլն: Ավանդական խաղակերպի վերանայում. “օտարման էֆեկտ”:

Իտալական նորագույն դրաման. Էդուարդո դե Ֆիլիպո, Լուիջի Պիրանդելլո: Ֆրանսիական նորագույն դրաման և անտիդրաման: Անգլիական նորագույն դրաման. Հարոլդ Պինտեր: Ամերիկյան նորագույն դրաման. Արթուր Միլլեր, Էդուարդ Օլբի: 20-րդ դարի առաջին կեսի ամերիկյան թատերագիտությունը. Ավգուստ Մահր, Ջոն Գասներ, Էրիկ Բենտլի: Լի Ստրասբերգը Ստանիսլավսկու “սիստեմի” կիրառող: Ստրասբերգի աշակերտները թատրոնից դուրս՝ կինոարվեստում: Դերասանի արվեստի հոգեբանության Գլենն Ուիլսոնի տեսությունը (Ստանիսլավսկուց անկախ): Դերասանի վարպետությունը ըստ Միխայիլ Զեխովի:

Շեքսպիրյան ավանդների նորացումն անգլիական թատրոնում. Ջոն Գիլգուդ, Ռալֆ Ռիչարդսոն, Ռիչարդ Բարտոն, Լոուրենս Օլիվիե, Վիվիեն Լի, Մայքլ Ռեդգրեյվ, Վանեսսա Ռեդգրեյվ: Պիտեր Բրուքը շեքսպիրյան դրամատուրգիայի մեկնաբան և Պոլ Սքոֆիլդը շեքսպիրյան դերերում (Համլետ, Լիր արքա, Թիմոն Աթենացի): Բրուքի “դատարկ տարածությունը” և թատրոնի երեք տեսակները 20-րդ դարում, ըստ Բրուքի:

Նորագույն հոսանքները ֆրանսիական թատրոնում. Ժան-Պոլ Սարտր, Էժեն Յոնեսկո, Սեմուել Բեքետ: Ձևերի որոնում, էքսպերիմենտալ թատրոններ, խաղային պայմանների ու տարածության վերաձևումներ: Փարիզի “Բլրամերձ” էքսպերիմենտալ թատրոնը: Արիան Մնուչկինի

“Արևային” թատրոնը: Եժի Գրոտովսկու “Աղքատ թատրոնը”: Ավանդական թատրոնի մայրամուտը և բեմադրական ձևերի նոր որոնումներ: Ռուս թատրոնը 20-րդ դարի երկրորդ կեսին: Մոսկվայի Վախթանգովի անվան թատրոնը Ռուբեն Սիմոնովի ղեկավարությամբ և նրա վարպետները. Ն. Գրիգենկո, Մ. Ույանով, Յուլիա Բորիսովա, Յու. Յակովլև: Պետերբուրգի Դրամատիկական մեծ թատրոնը Գ. Տովստոնոգովի ղեկավարությամբ և նրա վարպետները. Ի. Սմոկտունովսկի, Ա. Ֆրենդլիխ, Ա. Յուրսկի: Մոսկվայի “Սովրեմեննիկ” թատրոնը Օ. Եֆրեմովի ղեկավարությամբ: Տագանկայի հրապարակի թատրոնը և Յու. Լյուբիմովի նորագույն ռեժիսուրան: Ավանդական բեմադրական ձևերի սպառումը: Թատրոնի, որպես հասարակական հաղորդակցման կենտրոնի, դերի նվազումը: Հեռուստատեսությունը որպես հասարակական հաղորդակցման կենտրոն, և թատրոնը թատրոնից դուրս (հեռուստասերիալ):

Հայ թատրոնի պատմություն

Հնագույն դրաման Հայաստանում, նրա տարածաժամանակային պայմանաձևը և առասպելաբանական հիմքը: Հունական թատրոնը Հայաստանում (Արմավիր, Տիգրանակերտ, Արտաշատ):

Թատրոն և եկեղեցի հարաբերությունը միջնադարում: Քրիստոնեական պատարագի դրամատուրգիական հիմքը: Աշխարհիկ-հրապարակային թատրոնը (կրկես) միջնադարում: Հոգևոր դրամայի նախադրյալները: Ուսումնական բեմասացությունն ըստ քերական-մեկնիչների: Դպրոցական դրամաները Լվովում և Վենետիկում (17-18-րդ դարեր): Ժողովրդական խաղերի դրամատիկական գծերը:

Կ.Պոլսի “Արամյան ընկերության” կրկես-թատրոնը (1846-ից) որպես առաջին պրոֆեսիոնալ թատրոնը Մերձավոր Արևելքում: Թատրոնի

կրկեսային բնույթը և դրամատիկական գծերը. պատմական դրամա և թարգմանական մելոդրամա: Թատրոնի շրջագայությունը (Թավրիզ, Թիֆլիս, Երևան):

Հայ պատմա-հայրենասիրական դրամայի սկզբնավորումը Վենետիկի Մխիթարյանների դպրոցական բեմում: Կլասիցիզմը հայ թատերագրության մեջ (Պետրոս Մինասյան): Առաջին աշխարհիկ կատակերգությունները և Գ. Շիրմա-զանյանի թատերագրական պամֆլետը՝ “նկարագրություն ինչ-ինչ գործոց...”

Կ.Պոլսի “Արևելյան թատրոնը” (1961-ից), նրա թարգմանական և ինքնուրույն խաղացանկը: Առաջին պրոֆեսիոնալ դերասանները. Արուսյակ Փափագյան, Ստեփան Էքքյան, Մարտիրոս Մնակյան և այլք: Պոլսահայ բեմական ռոմանտիզմը և մելոդրամատիզմը:

Թիֆլիսի “Հայոց թատրոնը” (1863-ից) և առաջին պրոֆեսիոնալ դերասանները. Վաղարշակ Շահխաթունյան, Միհրդատ Ամերիկյան, Ստեփան Մատինյան, Սոփիա Մելիք-Նազարյան, Արտաշես Սուքիասյան, Քեթևան Արամյան: Թատրոնի խաղացանկը. ինքնուրույն և թարգմանական: Միքայել Տեր-Գրիգորյանի, Նիկողայոս Փուղինյանի, Նիկողայոս Ադաթյանի կատակերգությունները: Պատմա-հայրենասիրական դրամաներ (Խ.Գալֆայան, Հ. Կարենյան): Գևորգ Չմշկյանը որպես առաջատար դերասան և բեմադրիչ: Գաբրիել Սունդուկյանի դրամատուրգիան (“Խաթաբալա”, “Պեպո”, “Քանդած օջախ “ և այլն) և արևելահայ դերասանական դպրոցի կազմավորումը. (60-70-ական թվականներ):

Պոլսահայ թատերական կյանքը 70-ական թվականներին: “Արևելյան թատրոնը” Պետրոս Մաղաքյանի գլխավորությամբ և Հակոբ Վարդովյանի “Թատրոն Օսմանիեն”: Մելոդրամային խաղացանկը և խաղի ռոմանտիկական ոճը: Մնակյան, Թովմաս Ֆասուլյան, Երանուհի Գարագաշյան: Խաղացանկային բազմազանություն. ռոմանտիկական դրամա, մելոդրամա, պատմա-հայրենասիրական դրամա (Պետրոս Դուրյան):

Թիֆլիսահայ և պոլսահայ դերասանների շփումները և հակասությունները խաղացանկի ու խաղաոճի առումով: Պոլսահայ դերասանները Թիֆլիսում և թատերական քննադատությունը (Գրիգոր Արծրունի, Սպանդար Սպանդարյան): Մարտիրոս Մնակյանը և Պետրոս Ադամյանը որպես առաջատար դերասաններ: Անցումը մելոդրամայից դասական խաղացանկի (“Համլետ”, “Խելքից պատուհաս”, “Արդյունավոր պաշտոն”, “Ռևիզոր”, “Վենետիկի վաճառականը” և այլն):

Պետրոս Ադամյան. մելոդրամայից՝ դասականություն. Համլետ, Ջացկի, Արբենին (“Դիմակահանդես”): Ադամյանը ռուս քննադատության գնահատմամբ: Ադամյանը հայ հասարակական մտքի գնահատմամբ (Շիրվանզադե, Ա. Չոպանյան, Հ. Թումանյան):

80-ական թվականների հայ դերասանական միջավայրը. Գևորգ Չմշկյան, Ամիրան Մանդինյան, Սաթենիկ Չմշկյան, Մկրտիչ Ավայան, Վիրգինիա Գարագաշյան, Մարի Նվարդ:

Հայ գավառական թատրոնը: Թատրոնը Ալեքսանդրապոլում, Երևանում, Շուշիում և այլուր: Գավառական թատրոնի բարոյա-հասարակական նշանակությունը: Էմին Տեր-Գրիգորյանի կենցաղային կատակերգությունները:

90-ական թվականների թատրոնը Թիֆլիսում և Բաքվում: Խաղացանկը՝ ռուսական և արևմտաեվրոպական: Ազնիվ Հրաչյան սալոնային դրամայում (“Քամելիազարդ կինը”): Հրաչյան հոգեբանական ռեալիզմի ջատագով: Սիրանույշը կրքերի ռոմանտիկայով և ողբերգական շնչով (“Էռլեանի կույսը”, “Մեդեա”): Գևորգ Պետրոսյանը դերասան և բեմադրիչ: Արդի եվրոպական դրաման Պետրոսյանի բեմադրություններով (Իբսեն՝ “Ժողովրդի թշնամին”, 1982թ., Գ. Հաուպտման՝ “Կառապան Հենշել” և այլն): Դերասանական միջավայրը. Գևորգ Տեր-Դավթյան, Դավիթ Թոյանց, Վարդուհի և այլք: Հովհաննես Աբելյանի մուտքը դասական դերերով (Էթելլո, Շտոկման): Շիրվանզադեն թատերական քննադատ: Դասական

ռեալիզմի ջատագովումը Շիրվանզադեի հողվածներում: Պետրոսյանը, Աբեյյանը և Սիրանույշը Շիրվանզադեի գնահատումներում:

Հակոբ Պարոնյանի “Մեծապատիվ մուրացկանների” բեմականացումը և “Պաղտասար աղբարի” բեմադրությունները (Արամ Վրույր, Դավիթ Թրյանց): Սունդուկյանական գիծը. Գևորգ Տեր-Դավթյան և Վարդուհի:

Թատրոնը և ազգային հարցը. պատմա-հայրենասիրական դրամաների վերհույը Գավառում: Շուշիի թատրոնը: Շուշին գաստրոլային կենտրոն: Գևորգ Պետրոսյանը Շուշիում: Էմին Տեր-Գրիգորյանի գործունեությունը Երևանում: Երևանյան դերասաններ՝ Մակար և Աշխեն Տեր-Սարգսյաններ: Կատակերգակ դերասաններ Պողոս Արաքսյանը և Գրիգոր Ավետյանը որպես դասական կատակերգության վարպետներ:

Թատրոնը Կ. Պոլսում: Մարտիրոս Մնակյանի “Օսմանյան դրամատիկ թատերախումբը”. հայ դերասանները թուրքերեն թարգմանված եվրոպական մելոդրամաներում: Թովմաս Ֆասուլյաճյանի հայերեն ներկայացումները: Սիրանույշի ելույթները: Հայկական ներկայացումների վերջնական արգելքը 1985 թվին: Պոլսահայ դերասանները Թիֆլիսում և Բաքվում. Դավիթ Թրյանց, Վարդիթեր և Մարի Ֆելեկյաններ:

“Հայոց դրամատիկական ընկերության” հիմնումը Թիֆլիսում: Շիրվանզադեի դրամատուրգիան. “Արմենուհի”, “Պատվի համար”, “Կործանվածը”: Վրթանես Փափազյանի “Ժայռը”: Լևոն Շանթի դրամատուրգիան. “Հին աստվածներ”, “Կայսրը”: Ուղենշային բեմադրություններ. Չեխով՝ “Ճայը”(1905թ.), Մ. Գորկի՝ “Հատակում”(1908թ.), Շանթ՝ “Հին աստվածներ” (1913թ., բեմադր. Ա. Արմենյան): Նեոռոմանտիզմը հայ թատրոնում. Սաթենիկ Ադամյան, Հովհաննես Զարիֆյան, Իսահակ Ալիխանյան, Օլգա Մայսուրյան, Աննա Խիթարյան: Աբեյյանը ռուսական և ազգային խաղացանկում: Աբեյյանը Շիրվանզադեի դրամաներում: Վահրամ Փափազյանի մուտքը (Օթելլո, Քին, Աբեղա, Օհան Գուրգեն):

Հայ պրոֆեսիոնալ ռեժիսուրան. Գևորգ Պետրոսյան, Օվի Սևումյան, Արմեն Արմենյան: Թատերական ստուդիաներ. Վարդան Միրզոյանի երևանյան ստուդիան (1919թ.) և Սուրեն Խաչատրյանի մոսկովյան ստուդիան (1919թ.):

Առաջին պետական թատրոնի բացումը “Պեպո” ներկայացումով, Երևանում, 1922թ. հունվարի 25-ին: Լևոն Քալանթարի և Արշակ Բուրջայանի ռեժիսուրան: Երկրորդ պետական թատրոնի բացումը 1928թվին, Լենինականում: Պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը 1929թ., Երևանում (ռեժիսոր՝ Տիգրան Շամիրխանյան): Թիֆլիսի և Բաքվի հայկական թատրոնները:

Հայ նորագույն թատրոնի վարպետները. Վաղարշ Վաղարշյան, Ավետ Ավետիսյան, Օլգա Գուլագյան, Հասմիկ, Արուս Ոսկանյան, Մկրտիչ Զաննան, Համբարձում Խաչանյան, Միքայել Մանվելյան, Հրաչյա Ներսիսյան, Գուրգեն Զանիբեկյան: Արմեն Գուլակյանի ռեժիսուրան, և թատրոնը ակադեմիական նկարագրով:

Թատրոնի խաղացանկը՝ դասական և արդիական: Գաղափարական տուրքեր, Սոցիալիստական ռեալիզմ և գաղափարամետ քննադատություն (Ս.Մելիքսեթյան, Ս.Հարությունյան):

Վահրամ Փափագյանը մոսկովյան բեմում և Փարիզում (1932թ.): Ֆրանսիական քննադատությունը Փափագյանի մասին: Փափագյանի այցելությունները Երևան և Լենինական (Օթելլո, Համլետ, Դոն ժուան, Կորրադո):

Երկրորդ պետական թատրոնի վարպետները. Լևոն Զոհրաբյան, Յուլյա Ամերիկյան, Արմեն Արմենյան, Բաբկեն Գաբրիելյան, Նինա Բոխյան, Արտավազդ Փաշայան: Վարդան Աճեմյանը Լենինականի թատրոնում (“Հատակում”, “Տասներկուերորդ գիշեր”, “Կրեչինսկու հարսանիքը”, “Արա Գեղեցիկ” և այլն):

Հայ թատրոնի հետպատերազմյան շրջանը (1945-ից) և Արմեն Գուվակյանի բեմադրությունները (“Պեպո”, “Խաթաբալա”, “Կենդանի դիակ”, “Դիմակահանդես” և այլն): Գաղափարական հարկադրանքները և թատրոնը: Թատերական քննադատությունը. Սուրեն Հարությունյան, Սարգիս Մելիքսեթյան, Ռուբեն Զարյան: Արդիական թատերագիրներ. Նաիրի Զարյան, Ալեքսանդր Արաքսմանյան, Գրիգոր Տեր-Գրիգորյան: Դասական կատակերգության գիծը շարունակող դերասաններ. Թադևոս Սարյան, Գուրգեն Գաբրիելյան: Երաժշտական կոմեդիայի թատրոնը: Հայկ և Իզաբելլա Դանզասներ: Կարապետ Խաչվանքյան:

Սուրեն Քոչարյանի գրական էստրադան որպես մեկ դերասանի թատրոն (Թումանյան, Աբովյան, Սունդուկյան, Չարենց): Քոչարյանի արվեստի առանձնահատկությունը բեմական տեսակետից:

Երևանի թատերական ինստիտուտը (1944-ից) և նրա շրջանավարտները. Մետաքսյան Սիմոնյան, Միեր Մկրտչյան, Խորեն Աբրահամյան, Սոս Սարգսյան: Բեմադրիչներ. Զավեն Տատինցյան, Գրիգոր Մկրտչյան:

Երևանի դրամատիկական թատրոնը և Հրաչյա Ղափլանյանի բեմադրությունները:

20-րդ դարի երկրորդ կեսի հայ թատերական քննադատությունը. Ռ.Զարյան, Լևոն Խալաթյան, Սաբիր Ռիզան, Լևոն Հախվերդյան, Լուիզա Սամվելյան, Հենրիկ Հովհաննիսյան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննիսյան Հ., Բեմական խոսքի պոետիկական, Եր., 1973
2. Հովհաննիսյան Հ., Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Եր., 1978
3. Հովհաննիսյան Հ., Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Եր., 1990
4. Հովհաննիսյան Հ., Միջնադարյան բեմ, Եր., 2004

5. Հովհաննիսյան Հ., 19-րդ դարի հայ թատրոնի պատմություն, Եր., 2010
6. Հովհաննիսյան Հ., Սուրեն Քոչարյանի գրական բեմը, Եր., 2016
7. Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 1-ին, Եր., 1959, գիրք 2-րդ, Եր., 1964
8. Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմություն, հատոր 1-ին, Եր., 1962, հատոր 2-րդ, Եր., 1969, հատոր 3-րդ, Եր., 1975:
9. Հախվերդյան Լ., Հայ թատրոնի պատմություն. 1901-1920թթ, Եր., 1980
10. “Հայ սովետական թատրոնի պատմություն”, (հեղինակներ՝ Բ. Հարությունյան, Խ. Ավագյան, Ս. Ռիզակ, Լ. Հախվերդյան, Լ. Խալաթյան), Եր., 1967
11. Հարությունյան Բ., Հայ սովետական թատրոն (1917-1977), Եր., 1985
12. Չմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Եր., 1953
13. Հարությունյան Ս., Միհրդատ Ամերիկյան, Եր., 1958
14. Հարությունյան Ս., Գևորգ Չմշկյան, Եր., 1959
15. Զարյան Ռ., Սիրանույշ, Եր., 1956
16. Զարյան Ռ., Ադամյանի արվեստը, Եր., 1960
17. Զարյան Ռ., Ադամյան կյանքը, Եր., 1961
18. Զարյան Ռ., Էջեր հայ թատրոնի պատմությունից, Եր., 1990
19. Մելիքսեթյան Ս., Հովհաննես Աբեյան, Եր., 1954
20. Սամվելյան Լ., Շեքսպիրը և հայ գրական ու թատերական մշակույթը, Եր., 1974
21. Շիրվանզադե Ալ., Երկերի ժողովածու, հ. 10-րդ, Եր., 1962
22. Դեմիրճյան Դ., Հուշեր և խոհեր հայ թատրոնի մասին, Երկերի ժողովածու, հ. 6-րդ, Եր., 1958:
23. Քալանթար Լ., Արվեստի մայրուղիներում, Եր., 1963
24. Քոչարյան Ս., Կենդանի խոսքի ոլորտներում, Եր., 1969
25. Փափազյան Վ., Հետադարձ հայացք, գիրք 1-ին, Եր., 1956, գիրք 2-րդ, Եր., 1957
26. Փափազյան Վ., Համլետը ինչպես տեսա, Եր., 1968
27. Վաղարշյան Վ., Ընկերներս, բարեկամներս և ես, Եր., 1959
28. Գուլազյան Օ., Հուշեր, Եր., 1957
29. Զանիբեկյան Գ., Իմ աշխարհից, Եր., 1977
30. Յուզովսկի Յու., Դարն ու կերպարը, Եր., 1975

31. Հախվերդյան Լ., Կլասիկան և մեր օրերը, Վարդան Աճեմյանի արվեստը, Եր., 1962
32. Արիստոտել, Պոետիկա, Եր., 1955
33. Կոկլեն-ավագ, Դերասանի արվեստը, Եր., 1978
34. Դենի Դիդրո, Պարադոքս դերասանի մասին, Եր., 1992
35. Ստանիսլավսկի Կ., Արհեստ, Եր., 1940
36. Ստանիսլավսկի Կ., Իմ կյանքը արվեստում, Եր., 1954
37. Ստանիսլավսկի Կ., Դերասանի և ռեժիսորի արվեստը, Եր., 1981
38. Հովհաննիսյան Հ., Դերասանի արվեստի բնույթը, Եր., 2002
39. Հայզինգա Յո., Нормы ludens (խաղացող մարդը), Եր., 2007
40. Ершов П., Технология актерского искусства. М., 1959
41. Захава Б., Мастерство актера и режиссера. М., 1973
42. Лессинг Г.-Э., Гамбургская драматургия. М., 1936
43. Станиславский К.С., Работа актера над собой. М., 1948
44. Станиславский К.С., Моя жизнь в искусстве. М., 1948
45. Вахтангов Е., Записки, статьи, письма. М., 1960
46. Чехов М., Об искусстве актера, М., 1999
47. Мейерхольд В., Статьи, письма, речи, беседы. М., 1968
48. История западноевропейского театра. Т. I-6, М., 1956-1974
49. Брехт Б., О театре. М., 1965
50. Жан Вилар. О театральной традиции. М., 1956
51. Товстоногов Г., Зеркало сцены. Т. I-2, М., 1980
52. Горчаков Н., Режиссерские уроки Станиславского. М., 1952
53. Горчаков Н., Режиссерские уроки Вахтангова. М., 1952
54. Юзовский Ю., О театре и драме. Т. I-2, М., 1982
55. Аникст А., Теория драмы от Аристотеля до Лессинга, М., 1967
56. Бояджиев Г., Вечно прекрасный театр эпохи Возрождения. М., 1973
57. Бояджиев Г., Поэзия театра. М., 1960
58. Волкенштейн В., Драматургия. М., 1960
59. Зингерман Б., Очерки истории драмы 20-го века. М., 1979
60. Питер Брук. Пустое пространство. М., 1976.

ԿԻՆՈԱՐՎԵՍ

Կինոգիտությունը որպես գիտություն: Կինոգիտություն առարկան: Կինոգիտությունը որպես արվեստաբանության բնագավառ: Կինոգիտության հիմնական բաժինների՝ կինոյի տեսության, կինոյի պատմության և կինոքննադատության փոխադարձ կապը:

Կինոյի տեսությունը որպես կինոյին բնորոշ ընդհանուր օրինաչափությունների, կինոստեղծագործության ընթացքի և կինոարտադրանքների հասարակական գործունեության մասին գիտություն:

Կինոտեսության կազմավորման ու զարգացման հիմնական փուլերը և ուղղությունները:

Կինոգիտության նախաձեռնողները. Լ. Դեյուկ, Օ. Մուսինակ (Ֆրանսիա), Վ. Տուրկին (Ռուսաստան) և ուրիշներ:

Կինոարվեստի, կինոյի առանձնահատկության և արտահայտչական “լեզվի” հիմնախնդիրների տեսական մշակումը Լ. Կուլեշովի, Ս. Էյզենշտեյնի, Վ. Պուդովկինի, Դ. Վերտովի գործերում:

Կինոտեսության զարգացումն արևմտյան կինոգետների (Պ.Ռոթա, Ռ. Արնհայմ, Դ. Մենվել, Լ.Ջեկոբս, Է.Լինդգրեն, Ջ.Դոուսոն, Ջ. Կրակուեր, Ա.Բազեն, Մ.Մարթեն և ուրիշներ) գործերում:

Կինեմատոգրաֆը որպես ժամանակակից մշակույթի կարևորագույն բնագավառ: Կինեմատոգրաֆի հայտնագործման գիտատեխնիկական և սոցիալական նախադրյալները:

Կինոարվեստի ժողովրդայնությունը: Ազգայինը և միջազգայինը կինոարվեստում: Համաշխարհային կինոարվեստի գլուխգործոցների համամարդկային նշանակությունը:

Կինոարվեստի սինթետիկ բնույթը: Կինեմատոգրաֆիական սինթեզի էությունը: Հասկացողություն կինոկերպարի մասին: Ժամանակը և տարածությունը կինոարվեստում:

Կինոարվեստի գեղարվեստական և ճանաչողական հնարավորությունները: Կինոսցենարը որպես ֆիլմի գաղափարա-արտահայտչական հիմք:

Կինո-դրամատուրգիան որպես գրական ստեղծագործության նոր տեսակ:
Կինոսցենարի սյուժետային և կառուցվածքային առանձնահատկությունները:

Կինոռեժիսորի առաջատար դերը կինոսցենարի մեկնաբանման և էկրանային մարմնավորման գործում:

Հասկացություն կինոմոնտաժի մասին: Կինոմոնտաժի հիմնական ֆունկցիաները ֆիլմի գաղափարա-գեղարվեստական կառույցում: Կինոմոնտաժի հնարքների և մեթոդների էվոլյուցիան:

Դերասանը ֆիլմում: Ընդհանուրը (թատրոնի հետ) և առանձնահատուկը կինոդերասանի ստեղծագործության մեջ:

Օպերատորի և նկարչի դերը նկարահանման ստեղծագործական ընթացքում: Կամերային շարժումը: Լուսավորումը: Գույնը: Տրյուկների և հատուկ նկարահանումների տարբեր տեսակներ: Ֆիլմի դեկորատիվ լուծումը:

Կինոն և արվեստի մյուս տեսակները: Հարակից արվեստների փորձի և ձեռքբերումների ստեղծագործական յուրացումը որպես կինոյի զարգացման օրինաչափություն: Փոխադարձ ներգործությունը և փոխազդեցությունը կինոարվեստի և գրականության, թատրոնի, գեղարվեստի, երաժշտության միջև:

Կինոյի տեսակները և ժանրերը: Կինոյի տեսակները. փաստավավերագրական գիտական (գիտահետազոտական, գիտահանրամատչելի, ուսումնական), գեղարվեստախաղարկային, մուլտիպլիկացիա:

Հասկացողություն կինոժանրի մասին: Խաղարկային կինոյի ժանրերը. Էպիկական (կինոպատմվածք, կինովեպ, կինոպատում), դրամատիկական (կինոդրամա, կինոկատակերգություն, կինոողբերգություն, կինոմելոդրամա և այլն), երաժշտադրամատիկական (կինոօպերա, կինոբալետ, մյուզիքլ և այլն):

Կինոդեպեկտիվի, վեստերնի ժանրային յուրահատկությունները:

Կինոյի պատմությունը

Մինչեղափոխական Ռուսաստանի կինոն (1896-1917): Մինչեղափոխական ռուսական կինոյի գեղարվեստական փորձը:

20-ական թվականների խորհրդային կինոյի բազմազգ բնույթը. Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի ազգային կինեմատոգրաֆների սկզբնավորումը: 20-ական թվականների խորհրդային կինեմատոգրաֆիայի դերը կինոյի, որպես արվեստի, կայացման գործում:

Համր կինոյից հնչուն կինոյին անցնելը որպես կինոարվեստի զարգացման որակական թռիչք:

30-ական թվականների կինոարվեստի գեղարվեստական ձեռքբերումները: Կինոդրամատուրգիան որպես կինոարվեստի գեղարվեստական հիմքի հաստատում: Կինոյի կապերի ընդլայնումը գրականության և մյուս արվեստների հետ: Ռեալիստական թատրոնի փորձի ստեղծագործական յուրացումը: Էկրանի արտահայտչամիջոցների ընդլայնումը, կինոռեժիսուրայի, օպերատորական արվեստի վարպետության զարգացումը: Գույնի օգտագործման առաջին փորձերը կինոյում: Խորհրդային կինեմատոգրաֆի ձեռքբերումներն ու հակասությունները հետպատերազմյան շրջանում: Խորհրդային ֆիլմերի հաջողությունները միջազգային փառատոններում:

Կինոն որպես խորհրդային և ժամանակակից առասպելներ ստեղծելու անփոխարինելի գործիք, կոմունիստական գաղափարական մեքենայի կարևորագույն մաս: Կինոարվեստը և խորհրդային վարչա-հրամայական համակարգը: Այլախոհության կոպիտ ճնշումը կինոյում (Ա.Տարկովսկի, Ա.Փարաջանով):

Հայկական կինոյի պատմություն

Ազգային հայկական ֆիլմ ստեղծելու մշակույթի հայ գործիչների փորձերը:

Առաջին կինոկազմակերպությունները Հայաստանում: Հայաստանի կինոֆիկացիան: Դճնունու գործունեությունը:

Առաջին հայկական ֆիլմը (“Նամուս” 1925): Հ.Բեկնազարյանի գործունեության սկիզբը Հայաստանում: Առաջին հայկական գեղարվեստական ֆիլմերը: Սոցիալ-կենցաղային թեմատիկան համր ֆիլմերում: Դասական գրականության էկրանավորում:

Հայկական պատմահեղափոխական ֆիլմերը: Հ. Բեկնազարյանի, Պ. Բարխուդարյանի, Ա.Մարտիրոսյանի ստեղծագործությունը: Դերասանը հայկական համր կինոյում: Կինոդերասանի հայկական ազգային դպրոցի կազմավորումը: Հայկական պատմահեղափոխական ֆիլմը նոր փուլում:

Մինչպատերազմյան շրջանի հայկական մուլտիպլիկացիան:

Հայկական կինեմատոգրաֆը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: “Երկիր հայրենի” ֆիլմը:

Հայկական խաղարկային կարճամետրաժ ֆիլմը: Ա. Մանարյանի ստեղծագործությունը: Հայկական կինոն 50-ական թվականների կեսերին, 60-ականների սկզբին: Ռեժիսորական նոր կադրեր:

Հայ դասական գրականությունը կինոէկրանում: Հայ կինոդրամատուրգիայի նոր մակարդակը: Կինոն և ժամանակակից հայ գրականությունը:

Հայկական կինոօպերատորական արվեստը:

Հայ կինոգիտության զարգացումը:

Ֆ.Դովլաթյանի ստեղծագործությունը: Հ.Մայլանի ստեղծագործությունը: Ս.Փարաջանովի հայկական ֆիլմերը: Երիտասարդ հայ ռեժիսորները 70-80-ական թվականներին: Հեռացույց մոնտաժի տեսությունը և Ա. Փելեշյանի ֆիլմերը:

Հայ ռեժիսորների ստեղծագործությունը Հայաստանի հետխորհրդային կինոյում (Ա.Մանարյան, Դ.Կեսայանց, Հ.Խաչատրյան և ուրիշներ):

Արտասահմանյան կինոյի պատմություն

Համր կինոյի շրջան: Կինոյի անցած ուղին ատրակցիոններից դեպի ֆիլմերի արդյունաբերական արտադրությունը:

Առաջին հայտնագործությունները կինոյի արտահայտչամիջոցների բնագավառում (Դ.Գրիֆտ):

Կինոյի փոխազդեցությունը մյուս արվեստների հետ (թատրոն, գրականություն, գեղանկարչություն, լուսանկարչություն): Վաղ կինեմատոգրաֆի ժանրերը և տեսակները:

ԱՄՆ-ի դերի ուժեղացումը կինոարտադրության ասպարեզում առաջին համաշխարհային պատերազմից հետո: Կինոարվեստի ծաղկման ժամանակաշրջանն ԱՄՆ-ում:

Գերմանիան առաջին համաշխարհային պատերազմից հետո: Էքսպրեսիոնիզմը, դրա փիլիսոփայական պլատֆորմը և արտահայտչական լուծման առանձնահատկությունները:

Ֆրանսիայի կինեմատոգրաֆը հետպատերազմյան տարիներին: Ազգային կինոարտադրության ճգնաժամը: “Ավանգարդ” խումբը և դրա պայքարը կինոարվեստի գործերի արտահայտչական նոր լեզվի համար:

1929-1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Առաջադեմ ուժերի գործունեության աշխուժացումը ֆաշիզմի և ռազմամոլության դեմ: Ճգնաժամի և լճացման ազդեցությունը Հոլիվուդի գեղարվեստական ֆիլմերի թեմատիկայի վրա: Հասարակական սուր հակասություններն արտացոլելու առանձին ստեղծագործողների ձգտումը:

Գեղարվեստա-արտահայտչական նոր միջոցների որոնումները:

Երկրորդ համաշխարհային պատերազմը: Հակահիտլերյան կռաւիցիայի գոյացումը: Թեմատիկայի և ոճաբանության արմատական փոփոխությունները պատերազմական շրջանի ֆիլմերում: Փաստագրական կինոյի աճող կարևորությունը Անգլիայում, ԱՄՆ-ում: Փաստագրական ոճով խաղարկային ֆիլմերի ստեղծումը: Ֆիլմեր Եվրոպայի երկրներում հիտլերյան օկուպացիայի դիմադրության մասին:

“Սառը պատերազմի” խորացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում և ԱՄՆ-ի կինոն: Մրցակցություն հեռուստատեսության հետ:

Իտալիայի կինոարվեստը: Իտալական նեոռեալիզմը, նրա սոցիալ-գաղափարական էությունը: Նեոռեալիզմի տեսաբանները: Նեոռեալիստական ֆիլմերի մեթոդի և ոճի առանձնահատկությունները: Նեոռեալիզմի նշանակությունը Արևմուտքի հետպատերազմյան շրջանի կինեմատոգրաֆի զարգացման գործում:

Ֆրանսիայի կինոարվեստը: “Երեսունի” խումբը, նրա նպատակներն ու խնդիրները:

“Հեղինակային ֆիլմի” համր սկսված շարժումը: “Էաեյ դյու սինեմա” ամսագրի դիրքորոշումը և դրա նշանակությունը “նոր ալիք” կազմավորման գործում: Ա.Բազենի տեսության սկզբունքային դրույթները: Էկզիստենցիալիզմի փիլիսոփայության ազդեցությունը:

Շվեդիայի կինոարվեստը: Արտասահմանյան ֆիլմերի ճնշող ազդեցությունը: Շվեդ կինոռեժիսորների փորձը ազգային կինոարվեստի միտումները վերականգնելու ուղղությամբ: Էկզիստենցիալիզմի, միստիցիզմի և նեոֆրեյդիզմի ազդեցությունը շվեդական կինոարվեստի ականավոր վարպետների ստեղծագործության վրա:

Կինոն և հեռուստատեսությունն ԱՄՆ-ում. արևմտյան Եվրոպայի երկրներում: Ճապոնիայի կինոարվեստը: Ազգային արվեստի ավանդույթների զարգացումը և Եվրոպական մշակույթի ազդեցությունը ճապոնական կինոարվեստի վրա: Սամուրայական ֆիլմեր: Սոցիալական պրոբլեմները ժամանակակից ֆիլմերում: Ավանդական ազգային ժանրերի ձևափոխումը ամերիկյան սյուժեների և ոճաբանության ազդեցության ներքո: Ճապոնական կինոյի վարպետների ստեղծագործությունը:

Հնդկական կինեմատոգրաֆի հիմնական ուղղությունները:

Լեհաստանի կինոարվեստը: Լեհական նոր կինոյի կայացումը: “Լեհական դպրոցի” կազմավորումը, այդ շրջանի ֆիլմերի թեմատիկան և

ոճական առանձ-նահատկությունները: Լեհական կինոն վաթսունական և յոթանասունական թվականներին: Լեհ դասական գրականության էկրանավորումը: Կինոկատակեր-գության զարգացումը: Արդիականության պրոբլեմները երիտասարդ սերնդի ռեժիսուրայի ստեղծագործության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Литература по теории кино
2. Аристарко Г. История теорий кино. М., 1963
3. Арнхейм Р. Кино как искусство. М., 1960
4. Бела Балаш. Кино. Становление и сущность нового искусства. М., 1968
5. Бергман И. Статьи. Рецензии. Сценарии. Интервью. М., 1969
6. Гинзбург С. Очерки теории кино. М., 1974
7. Головня А. Мастерство кинооператора. М., 1965
8. Жанры кино.Сборник статей. М., 1979
9. Клер Р. Размышления о киноискусстве. М., 1968
10. Клер Р. Кино вчера, кино сегодня. М., 1981
11. Козинцев Г. Глубокий экран. М., 1971
12. Кракауэр З. Природа фильма. Реабилитация физической реальности.М.,1974
13. Кулешов Л. Основы кинорежиссуры. М., 1941
14. Лоусон Д. Фильм – творческий процесс. М., 1965
15. Монтегю М. Мир фильма. М.-Л., 1969
16. Муссиак Л. Избранное. М., 1981
17. Мэнвелл Р. Кино и зритель. М., 1957
18. Пудовкин В. Собрание сочинений в 3-х томах. М., 1974-1976
19. Ромм М., Избранные произведения в 3-х томах. М., 1980-1982
20. Тынянов Ю. Поэтика. История литературы. Кино. М., 1977
21. Феллини Ф. Статьи. Интервью. Рецензии. Воспоминания. М., 1968
22. Литература по истории мирового кино
23. Бунюэль Л. Сборник. М., 1979
24. Вайсфельд И. Завтра и сегодня. М., 1968
25. Виго Ж. Сборник. М., 1979

26. Гинзбург С. Рисованный и кукольный филм. Очерки развития советской мультипликации. М., 1957
27. Ивасаки А. Современное японское кино. М., 1962
28. История советского кино. 1917-1967, в 4-х томах. М., 1969-1978
29. Кино Великобритании. Сборник. М., 1970
30. Колодяжная В., Трутко И. История зарубежного кино, т.2/1929-1945/. М., 1970
31. Комаров С. История зарубежного кино, т.1, немое кино. М., 1965
32. Комаров С., Трутко И., Утилов В. История зарубежного кино, т.3
33. Краткая история советского кино. М., 1969
34. Куросава А. Сборник. М., 1977
35. Ренуар Ж. Моя жизнь, Мой фильм. М., 1981
36. Рэне А. Сборник. М., 1982
37. Садуль Ж. Всеобщая история кино, тт. 4-6, М., 1982
38. Садуль Ж. История киноискусства. М., 1957
39. Соболев Р. Голливуд. 60-е годы. Очерк. М., 1975
40. Феррара Д. Новое итальянское кино. М., 1959
41. Шуб Э. Крупным планом. М., 1959
42. Литература по истории армянского кино
43. Чахирьян Гр. Большой экран Армении. М., 1971
44. Кинематография Армении. Сборник. М., 1962
45. Кино Армении. Сборник. М., 1994
46. Ризаев Сабир. Армянская художественная кинематография. Ер., 1963
47. Калантар К. Амо Бек-Назаров. Искусство кинорежиссера. Ер., 1973
48. Калантар К. Актер в армянском кино. Концепция фильма и актерский образ. Ер. 1982
49. Закоян Гарегин. Армянское немое кино. Ер., 1976
50. Пелешян Артавазд. Мое кино. Ер., 1988
51. Проблемы кино и телевидения. Ер., 1980
52. Асмикян С. Тесный кадр. Ер., 1992
53. Бек-Назаров А. Записки актера и кинорежиссера. М., 1965
54. Армянское советское искусство на современном этапе. Ер., 1987
55. Քալանթար Կարեն, Համո Բենիազարյան. Ե., 1985
56. Հայկական կինոարվեստը. Ժողովածու, Ե., 1958
57. Հայկական կինոարվեստը. Ժողովածու, Ե., 1960
58. Մանուկյան Էմանվել, Ժամանակի վկան. Ե., 1980

59. Մադոյան Ռազմիկ, Տարիներ և ֆիլմեր. Ե., 1984

60. Դզնունի Դ.Տ., Ուրվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության. Ե., 1961

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հեռուստատեսության հայտնագործությունը:

Հեռուստատեսությունը և կինոն զանգվածային հաղորդակցության, լրատվության և արվեստի միասնական էկրանային համակարգում:

Գաղափարական - ստեղծագործական խնդիրների ընդհանրությունը:

Հեռուստատեսային կինոն (տելեֆիլմ) և հեռուստատեսային կինեմատոգրաֆիան: Կինեմատոգրաֆիայի և հեռուստատեսության ընկալման առանձնահատկությունները: Ժանրերը՝ թելադրված էկրանի երկու տարատեսակների յուրահատկություններով (TV և կինո):

TV-ն և այլ արվեստները: Ավանդական արվեստները հեռուստաձրագրերում: TV-ին տարբեր արվեստների փոխներգործության պրոցեսի օրինաչափությունները:

Հեռուստատեսությունը և երաժշտությունը: Հեռուստատեսությունը և թատերական արվեստը: “Հեռուստաթատրոն” հասկացությունը և նրա էկրանային ձևերն ու տարատեսակները:

Հեռուստաէկրանացման պրոբլեմները և նրա ստեղծագործական հնարավորությունները: Զարգացման հեռանկարները: Փաստագրական և գեղարվեստական հեռուստակինո:

Հեռուստաձրագիր: Ծրագրի կառուցվածքը: Հաղորդումների հիմնական խորագրերը և ցիկլերը:

TV-ի ուսումնա-լուսավորչական ժանրերը և գրքերի և հեռուստաֆիլմերի օգտագործումը դպրոցում պարապմունքների ժամանակ:

Ուղղակի TV և տեսաֆիլմեր: Հեռուստահոլովակների և TV-ի փոխներգործությունը տեսաֆիլմերի համակարգում:

Լրատվական և հրապարակախոսական ժանրերը հեռուստաձրագրում:

Փաստագրական ծրագրեր: Հեռուստահեռարձակման հնարները (ձևերը):
“Ուղղակի” հեռուստահաղորդումների առանձնահատկությունները:
Հայկական հեռուստատեսության ձևավորումը (կազմավորումը) և զարգացումը: Առաջին հայկական հեռուստաֆիլմերը և հեռուստանյութերը:
Հայկական հեռուստառեժիսյորները: Հեռուստաժանրերի զարգացումը ժամանակակից հայկական հեռուստատեսությունում:
Հեռուստաֆիլմի զարգացումը հայկական TV-ում: Հեռուստաբեմադրության զարգացումը հայկական TV-ում:
Հ. Աղամյանը և գունավոր TV-ի գյուտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մատենագրությունը

1. Музы XX века. М., 1978
2. Сайпак В. Телевидение и мы. М., 1965
3. Марченко Т. Театр в каждом доме. М., 1986
4. Поэтика телевизионного театра. М., 1979
5. Борецкий Р. Телевизионная программа. М., 1967
6. 40-мнений о телевидении. М., 1978
7. Нечай О. Становление художественного телефильма. Минск, 1976
8. Нечай О. Телевидение как художественная система. Минск, 1981
9. Многосерийный телефильм. М., 1976
10. Ефимов Э.М. Школьники о TV, М., 1986
11. Проблемы кино и TV. Ереван, 1980.т.1
12. Проблемы кино и TV. Ереван, 1980.т.2
13. Армянское советское искусство. Ереван, 1987
14. Գրիգորյան Վ. Հեռուստատեսային թատրոնի գործիչներ, Ե., 1986

ԺԷ.00.02 - ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՏՍ

ԲԱԺԻՆ Ա. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Հայ երաժշտություն

Հայ հոգևոր երգարվեստը 5-7-րդ դարերում: Հայ հոգևոր երգարվեստը 7-8-րդ դարերում: 5-8-րդ դարերի հայ մտածողների երաժշտագեղագիտական հայացքները (Դավիթ Անհաղթ, Դավիթ Քերական, Ստեփանոս Սյունեցի):

Շարականները և դրանց նշանակությունը հայ հոգևոր երաժշտության համար: “Պատարագը” որպես հայ հոգևոր երաժշտության կոթող:

Տաղերի արվեստի սկզբնավորումը և զարգացումը:

Գրիգոր Նարեկացու տաղերը: Հայ հոգևոր երգարվեստը 10-14-րդ դարերում: Ներսես Շնորհալի՛ն որպես երաժիշտ և երգահան:

Երաժշտության տեսությունը հին և միջնադարյան Հայաստանում: Ձայնեղանակների տեսության հիմնական գծերը միջնադարյան Հայաստանում: Աշուղների արվեստը, Սայաթ-Նովա:

Հայ հոգևոր երգարվեստի ուսումնասիրությունը անցյալում և ներկայում:

Նոր հայկական ձայնագրության գյուտը և նշանակությունը:

Արևմտահայ երաժշտական գործիչները՝ Գաբրիել Երանյան, Եղիա Տնտեսյան (տեսական ուսումնասիրությունները), Նիկողայոս Թաշճյան:

Տիգրան Չուխաճյանի ստեղծագործության պատմական նշանակությունը: Երաժշտաբեմական ժառանգությունը. “Արշակ Երկրորդ” օպերան: Երաժշտագիտական գրականությունը Չուխաճյանի մասին:

Հայկական երաժշտական թատրոնի ստեղծումը և նրա գործիչները:

Հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը Արևմտյան Հայաստանում 1860-1910թթ:

XIX դարի II կեսի հայ երաժշտական մշակույթը. արևելահայ կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը:

Քրիստափոր Կարա-Մուրզայի ստեղծագործական դիմանկարը:

Մակար Եկմալյանի ստեղծագործական դիմանկարը:

Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործական դիմանկարը:

Կոմիտասի ստեղծագործության պատմական նշանակությունը: Ստեղծագործական և երաժշտագիտական ժառանգությունը: Կոմիտասի գեղագիտական սկզբունքները: Կոմիտասը և հայ հոգևոր երաժշտությունը:

Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործական դիմանկարը: Սիմֆոնիկ ստեղծագործությունները: “Ալմաստ” օպերան:

Արմեն Տիգրանյանի ստեղծագործական դիմանկարը: Օպերային ստեղծագործությունը. “Անուշ” և “Դավիթ Բեկ” օպերաները:

Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական դիմանկարը: Ռոմ.Մելիքյանը և ազգային կամերային-վոկալ երաժշտության զարգացումը:

Արամ Խաչատրյանի ստեղծագործության պատմական նշանակությունը, ստեղծագործական դիմանկարը: Բալետները: Կոնցերտները: Սիմֆոնիկ ստեղծագործությունները:

Երաժշտական թատրոնը Հայաստանում (1930-1960թթ):

Սիմֆոնիկ երաժշտության զարգացումը Խորհրդային Հայաստանում:

Հայ կամերային-գործիքային երաժշտությունը (1940-1960թթ.):

Հարո Ստեփանյանի ստեղծագործական դիմանկարը:

Գրիգոր Եղիազարյանի ստեղծագործական դիմանկարը:

Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործական դիմանկարը:

Ղազարաս Սարյանի ստեղծագործական դիմանկարը:

Էդվարդ Միրզոյանի ստեղծագործական դիմանկարը:

Ա.Բաբաջանյանի ստեղծագործական դիմանկարը:

Հայ երաժշտության հիմնական ուղղությունները 1970-1990թթ.:

Ավետ Տերտերյանի ստեղծագործական դիմանկարը: Սիմֆոնիաները:

Էդգար Հովհաննիսյանի ստեղծագործական դիմանկարը: Երաժշտաբեմական ստեղծագործությունները:

Տիգրան Մանսուրյանի ստեղծագործական դիմանկարը:

Հայ սիմֆոնիկ երաժշտության զարգացման ընթացքը: Հայ վոկալ արվեստի զարգացման ընթացքը: Ժամանակակից հայկական սիմֆոնիկ

ստեղծագործության բնութագիրը: XX դարի ոճական ուղղությունները հայ երաժշտության մեջ: Սկիզբառահայ երաժշտության գործիչները:

2. Արտասահմանյան երաժշտություն

XIX-XX դարերի արտասահմանյան երաժշտության վերաբերյալ ռուսական երաժշտական պատմագիտության զարգացման հիմնական փուլերը:

Արևմտյան երաժշտական պատմագիտության զարգացման հիմնական փուլերը: Պրոֆեսիոնալիզմի հասկացությունը արվեստում, այդ թվում՝ երաժշտական արվեստում: Երաժշտական գործունեության դասակարգումը ֆոլկլորից մինչև երաժիշտների մասնագիտացման եվրոպական նոր տարատեսակները:

Բանավոր-պրոֆեսիոնալ (մենեստրելային) մշակույթի հասկացությունը և կոմպոզիտորական (գրավոր) ստեղծագործության վաղ ձևերը Եվրոպայում: Ռենեսանսի պատմական կատեգորիան՝ կարողինգյան ռենեսանս, XII դարի ռենեսանս, Վերածնության դարաշրջան: Երաժշտական Վերածննդի վերաբերյալ հիմնական գրականությունը:

Բարոկկոյի դարաշրջանը երաժշտական մշակույթում՝ պատմական փուլերը և գեղարվեստական անհատականությունները: Բարոկկոյի խոշորագույն ներկայացուցիչները (Իոհան Սեբաստիան Բախ, Գեորգ Ֆրիդրիխ Հենդել):

Յո.Ս. Բախի ժառանգության ընկալումը 1750-2010թթ.: Հիմնական աշխատությունները բախագիտության բնագավառում:

Դասականության պրոբլեմը երաժշտության մեջ: Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկ: Վիեննական դասական դպրոց (Հայդն, Մոցարտ, Բեթհովեն):

Բեթհովենագիտությունը XIX-XX դարերում:

Ռոմանտիզմը երաժշտության մեջ և նրա խոշոր ներկայացուցիչները (Ֆրանց Շոպեն, Ռոբերտ Շուման, Ֆրեդերիկ Շոպեն, Ֆերենց Լիստ, Հեկտոր Բեռլիոզ):

Ռոմանտիկ կոմպոզիտորների գրական ժառանգությունը:

Ռոմանտիզմի հասկացությունը երաժշտական գիտության մեջ:

Ռիխարդ Վագներ: Ջուզեպպե Վերդի: Միխայիլ Գլինկա: Պյոտր Չայկովսկի:

Ուշ ռոմանտիզմը, պոստռոմանտիզմը և նեոռոմանտիզմը երաժշտության մեջ: Երաժշտական դրամայի պրոբլեմը XIX դարում:

Սիմֆոնիկ պոեմ՝ ժանրի պատմությունն ու գեղագիտությունը:

Ազգային ուղղությունները XX դարի երաժշտության մեջ:

XX դարի երաժշտության հիմնական ուղղությունները և զարգացման միտումները (իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ, նեոկլասիցիզմ):

Նոր վիեննական դպրոց (Շյոնբերգ, Վեբերն, Բերգ):

Երաժշտական “ավանգարդը” (Էլեկտրոնային երաժշտություն՝ Կարլիայնց Շտոկհաուզեն, Լուչանո Բերիո, Ալեստորիկա՝ Ջոն Բեյջ, Կոնկրետ երաժշտություն՝ Պիեր Շեֆֆեր, Սոնորիկա՝ Մաուրիսիո Կագել):

Ռուսական խմբերգային երաժշտությունը XVIII դարում և XIX դարի առաջին քառորդում: Երաժշտական թատրոնը մինչ Մ.Ի.Գլինկան:

Երաժշտագիտական գրականությունը Գլինկայի մասին:

Կուլչիկովի գեղագիտական և ստեղծագործական սկզբունքները (ըստ գրական ժառանգության նյութերի):

